

“Եւ զայս երկուս լուծայս՝ զէտ միոյ նա-  
քարակտի՝ ցանկանալով ցանկացայ արկանել ի  
դանձանակ՝ Հոյակապ Գրքատան՝ Բարձր Սրբազ-  
նութեանդ:”

“Որ եթէ օգտարար եւ Հաճոյ թուիցի՝  
օգտակամ Սրբութեանդ, եւ բարձր Հրամանաւդ  
տպմամբ ի լոյս ընծայիցի, ոչ սակաւ երջանկու-  
թիւն եւ ինքեան Համարի իմն նուաստութիւն,  
գտանելով ար-  
ժանի՝ ծառայելոյ  
մերոյինս յարե-  
թասերունդ ազին-  
մնամ, Երջանկա-  
փայլ Սրբազնու-  
թեանդ՝ ամենա-  
նուաստ ծառայ  
Ընդայեցի Բժիշկ Պե-  
րրոս՝ որդի Յօհան-  
էէս Գալանթարի:”

Սոյն ուղերձն  
աւարտելով՝ Գա-  
լանթարեան կը  
գրէ իւր բժշկա-  
րանին յառաջա-  
բանութիւնը՝ Հա-  
մառօտ բայց ի-  
մաստնալից, զոր  
արժան կը դա-  
տեմք նշանակել  
Հօս գլխովին:

“Յառաջանա-  
լիւն՝ յաստօր Գրք-  
ոյս, համաօր Բժշկ-  
կարանէ:”

“Ըրդ՝ ըստո-  
րում ամենայն բա-  
նից եւ գործոց օգ-  
տակարաց՝ ի լոյս  
ածումն է՝ առ

գործածումն՝ յապագայն եկելոց, վասն որոյ՝  
պարտաւոր զիս Համարելով՝ ըստ տկար կարեաց  
իմոց՝ ձեռնամուխ եղէ, զօգտակարագոյն դեղո-  
րայսն՝ պատահական զանազան ցաւոց՝ ի սեռս  
մարդկայինս ազգի առգիպելոց՝ ի յարականս եւ  
թէ յիգականս՝ զփորձիւ եւ կիրառութեամբ  
գտեալն իմ՝ ներ քսանեւհինգամեայ աշխա-  
տանաց իմոց, կարձ՝ Համառօտ եւ զօրեղագոյն՝  
ըստ պարգեւեցելոյ աստուածային առատաձիր  
շնորհացն՝ ի դիր արձանացուցանել, զանուանս

ցաւոցն Հայկական բարբառիւ նշանագծեալ, եւ  
զըեղորէիցն՝ ի գիր Հայ, եւ ի բարբառ լատին  
առ գրելով՝ ի յօգուտ Հայկասեռ մերազնեիցն՝  
սիրով աշխատանացս այսմիկ փափաքողաց:”

“Եւ պատճառ՝ զայս ոճ կիրառելոյն իմոյ՝  
եղև նախապէս կատարեալ անտեղեկութիւն  
իմ՝ Հայկականս իմ լեզուի, եւ երկրորդաբար՝  
ըստորում ի բոլոր Եւրոպայ, ի յըռուսաստան,  
ի պարսկաստան,  
եւ ի թուրքաս-  
տան, ուր ազգք  
մեր՝ ըստ մեզաց  
մերոց՝ ցրիւ անկ-  
մամբ Հասեալ կան,  
ի տանց դեղավա-  
ճառիցն՝ դիւրաւ  
կարեն այնու լա-  
տինական անուա-  
նակոչութեամբն  
ստանալ զինդրե-  
լին. զի Հասարա-  
կաց է դեղածա-  
խից՝ այն լեզու:  
Որք ինքեանք կո-  
չին՝ ըստ լատին  
բառին՝ ափօթէ-  
քայ, եւ ըստ պար-  
սից արտաբերու-  
թեան՝ աթարխա-  
նայ:”

“Յորոց ստա-  
նալ կարէ ամենայն  
որ ֆորմուլայիւ,  
կամ որ նոյն է,  
ընէցէիթումիւ, որ  
պարսից բառիւ ա-  
սի նօսիսայ. եւ մեր  
գրեմք աստանօր՝  
կերպ շինելոյ դե-  
ղոյն:”

“Իսկ՝ որքան կարողացայ գտանել՝ լատին  
անուանց դեղորէիցն՝ անուանակոչութիւնն, թէ  
Հայկական եւ թէ՛ պարսիկ լեզուաւ, զայնս՝  
յատկապէս փորրիկ բառարանանման՝ այբբենա-  
կան կարգիւ դասեալ, ի լատինէ ի Հայ բարբառ  
եւ ի գիր. ըստ մասնաւորի սոյն գրքոյ բժշկա-  
կանի՝ ի վախճանին Համակցեցի. որ այն եւս՝ յու-  
սամ անպիտան ոչ լինել՝ մերս Հայկազեանց:”

“Եւ այս տկար կարեաց իմոց պտուղ՝  
տեառն է տուրք ի յօգուտ՝ Հմտանալոյ ախոր-



ՊԵՏՐՈՍ ԶԱՆՆԹԱՐԵԱՆ

տեառն է տուրք ի յօգուտ՝ Հմտանալոյ ախոր-